«Օտարերկրացիների մասին օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Անձնագիրը վերցնելը

1. Օտարերկրացի մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է վարույթն իրականացնող մարմինը: Այն պահվում է վարույթն իրականացնող մարմնի մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց անմիջապես հետո: Ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված օտարերկրացու անձնագիրը պահվում է պատիժը կատարող մարմնում և օտարերկրացուն վերադարձվում է պատիժը կրելուց անմիջապես հետո:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ
Վ. Խաչատուրյան

«____»_____2025թ.

ք. Երևան